

ԵՏՅՐԱՏԻ ԵԺԱՆԱԳԻՆ ԽԱԴԱՐԱՆ

№ 2

№ 3

ԴԵՄՅԱՆ ԲԵՂՆԻ

ՎՈՏԱՆԱՎՈՐՆԵՐ ՅԵՎ Ա. ՌԱԿՆԵՐ

ԵՏՅՐԱՏԻ ԶԵՄԵՐԱԳԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ
ԵՐԱՎԱՆ

1934

891.71

F-41

17 JUL 2006

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՃԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

25 NOV 2010

№ 3

№ 3

891.71

ԴԵՄՅԱՆ ԲԵԴՆԻ

F-41

պ.

ՎՈՏԱՆԱՎՈՐՆԵՐ ՅԵՎ ԱՌԱԿՆԵՐ

Պրակ 1

Քաղաք. Դ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

1006 2679
2820

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՃԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՅԵՐԵՎԱՆ 1 9 3 3

04.03.2013

10064

04.03.2013

Պատ. խմբագիր ԵՍ. Հաքոնյ
Ցեխ. խմբագիր Յ. Խաչվանյան
Պրըագրիչ Վ. Տերոյան

Հրատար № 2678, Դրավիտ № 8239(Բ),
պատվեր № 1733, տիրաժ 3000. Պե-
հրատի տպարան, ստ. ֆ. 6 72X105, մեկ
տպ. թիւթում 102.400 տպ. հանձնված
է արտադրության 17/VII 1933 թ. ստո-
բագրված է տպագրության 19/X 1933 թ.

ԿՈՄՈՒՆԱՐՆԵՐ

(Փոխադրուքում)

Միջոց չունի խեղճ Թորոսը,
Ման է դալիս գլխակոր:
Խեղճը միայն մի ձի ունի,
Բայց չկա սերմ ու արոր:

Սաքոն հոգսից մոլորվել է,
Նմանում է հարբածի:
Միայն մի հին արոր ունի,
Սակայն չկա սերմ ու ձի:

Ծեր Հովակը ցավի մեջ է,
Անիծում է իր որը:
Նա սերմ ունի, բայց ձիու հետ
Շուտ է ծախել արորը:

Մի որ նրանք հավաքվեցին,
Իրար տվին դարդ ու ցավ.
Մի խոսք դեսից, մի խոսք դենից,
Ու զրույցը տաքացավ:

— Ա՛խ, ես կլանք չե, ալլ տանջանք ե:
— Ա՛խ, իմ ցավին չկա դեղ:
Խոսք մեկ արին՝ իրենց դարդին
Մի ճար անեն միատեղ:

Յեւ ըերեցին, միացրին,
Ինչ ունեցին առանձին:
Արդեն պատրաստ ե կոմունան —
Ունեն արոր, սերմ ու ձի:

Ծեր Հովակը Թորոսի հետ
Արտն ե վարում որնիրուն,
Իսկ մեր Սաքոն կոմունացին
Կառուցում ե մի նոր տուն:

Աշխատանքը դարձավ հաճույք,
Կյանքն ել չունի դառնութիւն,
— Աշողութիւնն ձեր նոր գործին,
Կոմունացին ջերմ վողջիւն:

1919

ԿԼԱՐՆԵՏՆ ՈՒ ՍՐԻՆԳԸ

Ամառվա մի որ ծաղկավետ դաշտում,
Վորի մեջտեղից հոսում եր գետը,
Բախտի բերմունքով տեսան մեկ մեկու
Հովվի սրինգը և կլարնետը:

Բարե տվեցին ու բարե առան,
Հետո սրինգը հարց տվեց եսպես.
— Ախպեր, տեսնում եմ՝ քաղաքացի չես,
Բայց չեմ իմանում՝ ինչ ծագում ունես:

Կլարնետն եստեղ սաստիկ նեղացավ.
— Խոսելուց առաջ խոսքդ հալիւր միշտ,
Աչքդ բաց արա և ապա նայիւր,
Յես կլարնետն եմ՝ հայտնի լերաժիշտ:

Ճիշտ ե՝ իմ ձայնը նման ե քոնին,
Սակայն չես ունեւ տաղանդ բնածին:
Թե իմ ման լեկած տեղերը հայտնեմ,
Ահից կդողա տղետ գլուղացին:

Ա՛յ, ասեմ, լսիւր — իմ նվազի տակ
Պարում են նույնիսկ լերկրի ջոջերը,
Իսկ քո լերգի տակ, — համեմատիւր, տես, —
Կովերն են միայն շարժում պոչերը:

— Այդ ճշմարիտ ե, — ասաց սրինգը, —
Մեզ դուք չեք սիրել Վոչ մի ժամանակ,
Բայց լավ իմացիւր, Վոր քո տերերը
Մի որ կպարեն և իմ լերգի տակ:

ԲԱՐԵՍԻՐՏ ՍԱՐԴԸ

Մի բարեսիրտ մարդ ծաղկանոցի մեջ
Տեսավ մի մանուկ՝ ուշաթափ փռված:
Ուժասպառ եր նա, գունատ և նիհար,
Մի շապիկ ուներ, հն և քրքրված:

— Ցավում եմ, հոգեւոր, — ասաց լավ մարդը, —
Վոր տրորել ես եղ սիրուն վարդը,
Բայց ավելի շատ քեզ եմ ավստում.
Ասա՝ ինչո՞ւ չես պառկել եղ փոսում:

— Անոթութունն է ինձ ետեղ բերել,
Ես չերորդե որն է՝ վոչինչ չեմ կերել:
Սոված եմ, անճար,
Ուտում եմ բանջար:

— Բանջար, — խղճալով գոչեց լավ մարդը, —
Եղտեղ կանաչը սակավ է և վատ՝
Անցիր տան լուռ, ետեղ մի փոս կա,
Փոսի կանաչը թե լավ է, թե շատ:

Մ Ո Մ Ը

— Պանտեյի իրիչ, տեր իմ, մեկ նալիր...
Վոլգան գաղաղեց... նալը շուռ կգա:
Թե շուռ չգա ել, դարձյալ կառնենք,
Բեռը կթրջվի, փրկութուն չկա:
Գործակատարը բեռն է պաշտպանում,
Իսկ նրա տերը՝ փոթորկի գերին
Ձեռքերը պարզած, դողդոջուն ձայնով
Աղոթք է անում բոլոր սրբերին.
— Յերկնային ուժեր, ոգնության հասեր,
Փրկեք կորստից իմ նալի բեռը:
Դրա փոխարեն ձեզ կվճարեմ՝
Մի փութ ձեթ կածեմ ձեր կանթեղները:
Իսկ գալիք տոնին, ա՛յ, ես կալմի չափ
Մի մոմ կվառեմ մեր սուրբ տաճարում:
Գործակատարը հարց տվեց ապշած.
— Եղպիսի մեծ մոմ որի է վաճառում:
— Լո՛ր, ա՛յ տխմար, թող լերկինքն ոգնե,
Ես խորխորատից անվնաս անցնենք,
Իսկ մոմի մասին հետո... կտեսնենք...
Դուք ե թե չափը կկարճացնենք:

ՏԵՐԵՐԻ ՍՏՎԵՐԸ

Մոսկովի կարմիր հրապարակում
Առանց կալվածքի կալվածատերը,
Առանց ձեռնարկի ձեռնարկատերը
Յեվ առանց շահի դրամատերը,
Այդ յերեք խոշոր բռունցքները հին,
Յերևու որ առաջ, մայիսի մեկին
Միասին կանգնած լուռ դիտում եյին
Աշխատող մարդկանց
Տոնը փառապանծ:

Այդ որը նրանք իրենց տներում
Չկարողացան հանգիստ սպասել,
Ուղեցին դուրս դալ, աչք ածել չորս կողմ
Յեվ աչք բանակի մեծ ուժը չափել,
Վոր իր յերկաթե՝ հաղթ կրունկի աակ
Սեղմում, ջարդում ե գալիստն ու թագ:
Յերբ մի լավ տեսան,
Տուն վերադարձան:

— Հը՛, վհնց ե, առա:

— Ե՛, դուր չի գալիս:

— Եդ որը առաջ

Լազաթ եր տալիս:

Անցավ են սիրուն, վեհ տեսարանը,
Յերբ ժանդարմները հոծ եսկադրոնը
Կարճ մտրակներով մի լակնթարթում
Սգի յեր փոխում խուժանի տոնը:

Մեկ—գլխարկները կողքի յեն ծռում:
Յերկու—ճղվում են վերարկունները:
Յերեք—մարդ չկա, ցրվլ են յեկել,
Փախել են, մտել մուժ անկյունները:
Իսկ հիմա ի՞նչ կա: Ե՛, համբ գնաց,
Պոեղիան մեռավ, վոչինչ չմնաց:

*

Դժվար չե ասել, թե ի՞նչ գրեցին
Արտասահմանում այդ որվա մասին:
Վորտեղ մեզ համար լույս ե ու խնջույք,
Նրանց աչքերին խավար ե ու սուգ:

1918

ՅԵԿԵՂԵՑՈՒՄ

(Փոխադրություն)

Ալուրավաճառ Մարտիրոս աղան
Յեկեղեցու մեջ աղոթում եր լուռ.
— Ոգնիր ինձ, աստված, քո հեղ ծառային
Առևտուրի մեջ հաջողութուն տուր:
Թող ուրիշները միլիոններ շահեն,
Ինձ եղքան պետք չէ, քիչ է խնդրածն իմ.
Թե հարյուր հազար տաս ինձ հս անգամ,
Քեզնից, տեր աստված, շատ գոհ կլինեմ:

Մարտիրոս աղան հանկարծ նկատեց
Իր կողքին կանգնած գերձակ Ավագին,
Վոր բարձր ձայնով աղոթք եր անում.
— Աստված իմ, ոգնիր քո խեղճ զավակին.
Հաճախորդ չունեմ, կարիքի մեջ եմ,
Մերկ են ու սոված չերախա ու կին:
Թե մի աբասի վաստակեմ որը,
Կբավարարե իմ ընտանիքին:

Մարտիրոս աղան, սաստիկ զալբացած,
Դերձակին հառեց իր աչքերը նենդ.
— Լիրբ, ան աբասիդ ու մի խանգարիր,
Թող՝ մարդավարի մեր աղոթքն անենք:

ԲԵՐԲԸ

Պատարագը ավարտելով,
Հերմակ ձեռքը դրած սրաին
Չաղ տերտերը չեկեղեցում
Քարոզ կարգաց ժողովրդին.
— Ո՛հ, տեսնում եմ՝ մոռացել էք
Աստված, աղոթք ու քահանա:
Միշտ խոսում եք ցանքսի մասին՝
Կարկուտ չդձ, կամ չորանա:
Աստված գիտե մեր ցավերը,
Նա մեր մասին հոգում է միշտ:
Գնանք դաշտը, մաղթանք անենք,
Ու կկորչեն կասկած ու վիշտ:
Աստված մեկը հազար կանի,
Կլիանանք հովիվ ու հոտ:
Ձեզնից շատ բան չեմ պահանջի—
Բարեկց՝ մի խուրձ, շողջից՝ մի կուտ:

*

Իմ սիրելի ընթերցողներ,
Մի կասկածեք դուք այս բանում.
Առատ ու լավ բերքի համար
Տերտերը ճիշտ գլիժ է տանում:
Թե աղոթե, շատ կհնձեն
Վարսակ, հաճար, գարի, ցորեն.
Ո՞վ, գլուղացին. — աստված գիտե,
Իսկ տերտերը — հավանորեն:

«ՀԱՐՅԱՎ ՎՈՐԴԻՆ ԱՍՏՈՒԾՈՒ»

Մեր տերտերը հաստափոր —
Վոսիկի ուներ մի սափոր:
Զարմանալու ի՞նչ կա վոր,
Յեկամուտ կար ամեն որ:

Բայց մի ձախորդ, չար տարի
Փոխվեց կարգը աշխարհի: —
Մարդիկ աստված ատեցին,
Հարուստներին դատեցին:

Մեր տերտերը սուգ մտավ,
Ել հանգիստ քուն չգտավ:
Միտք եր անում ինքն իրեն,
— Ունեցածիս կտիրեն:

Եդ անհավատ շները
Կողոպտեցին տները:
Մի որ տունս կմտնեն,
Տուփով վոսկիս կգտնեն:
Քանի ուշ չե, ճար անենք,
Թե չե ձեռքից կհանենք:

Ու շուտ գտավ նա ճարը,
Վոսկին տարավ տաճարը,
Դրեց բեմի մեջտեղը,
Տուփին մեխեց թիթեղը
Յեւ թիթեղին գրեց գոհ.
«Աստ ե մարմին Աստուծո»:

Բայց խորամանկ ժամկոչը
Հասկանալով տիրոջը
Հանեց տուփի փողերը,
Փոխեց զբաժ տողերը.
«Մարմին տյառն աստ վոչ գո,
Հարյավ վորդին Աստուծո»:

*

Վոր ժամկոչը մեծ գող ե,
Գեթ ինձ համար պարզ ե սա.
Գողը գողից գողացավ,
Մեղքը հւմն ե, դու ասա:
Բայց թե տերտերն իմանա,
Չեմ կարծում, թե դիմանա:

ՄՐՋՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՄՈՒՆԱ

(Հատված)

Անգործ Միտյան լուռ պառկել է անտառում:
Դուրսն ինչ լավ է, չեքք վոչ շոգ է վոչ հողմ:
Ո՞վ չի ուզի պառկել կանաչ խոտերում
Ու վոտները ազատ շարժել ամեն կողմ:

Միտյան աչք է գցում շուրջը — մի բղեղ
Չոր աղբի մեջ աշխատում է անհանգիստ,
Իսկ քիչ հեռու մրջյունները խմբերով
Հին կոճղի տակ հավաքում են ծեղ ու քիստ:

Մրջյունները վազվզում են դեռ ու դեն:
Յերբ հարում են իրենց պաշարն որեկան,
Շտապում են բունը կարգի բերելու. —
Մրջյունների կոմունա չե խակական:

Միտյան վոտքով մրջյունոցին պինդ զարկեց,
Մրջյունները դուրս թափվեցին կատաղած,
Խումբ-խումբ չեյան չար թշնամու վոտներին:
Միտյան զուր է ձեռքով նրանց քշում ցած:

Դեռ գալիս են պաշտպանելու կոմունան,
Չի պակասում նրանց չեռանդն ու թափը.
Բարձրացել են խեղճ Միտյայի ձեռներին,
Միտյան ցավից արագ վազեց գետափը:

Ճանապարհին նա կոխ տվեց բղեղին,
Վառվող ձեռքը ցավից կոխեց գրպանը.
Հասավ գետը, արագ հանեց հագուստը,
Զգաց՝ մեջքին վազվզում է ինչ վոր բան:

Միտյան գլխով սուղվեց ջրի հատակը
— Մրջյունոց չե, այլ բանակ է մարտական:
Ի՞նչ կանեցի, չեթե գետը չլիներ...
— Հե՛յ մրջյուններ, կոմունիստ եք խակական:

1918

ՅԵՐԴՈՒՄ

Դապոնի հետ գնացինք,
Խնդիր արինք գոռ ցարին:
Հունվարի ինն ամսուաց
Խրատ չեղավ թշվառին:
Վողբալով մեր զոհերին,
Թողած լաց ու աղերսանք
Հավաքել ենք մեր ուժը,
Վոր մահացու հարված տանք:
Ո՛վ արշունտ, Կարմիր ուր,
Մենք չերգվել ենք քո ջարդով՝
Թերի գործդ ավարտել
Միահամուռ, գոռ մարտով:
Հոշոտում եր մեր կուրծքը
Յերկգլխանի արծիվը:
Չի դադարել այն որից
Մեր ու նրա կռիվը:
Նենգ վոսոխին պատժեցինք,
Բաց տակավին վողջ ե նա:
Դուրս ենք քաշում մեր սուրը,
Վոր հարվածենք անխնա:
Ահա չերգվում ենք քեզնով,
Ո՛վ արշունտ ջարդի ուր. —
Սա կլինի մեր վերջին
Ճակատամարտն ահավոր:

1918

«ՄԻՆՁԵՎ ԵՍՏԵՂ»

Թրջված ու ծակ տրեխներով,
Հագած բարակ ցնցոտիներ,
Տոպրակն ուսին որորվելով
Ճանապարհ եր գնում մի ծեր:

Տրորվել են թուլ վոտները,
Ել չի կարող գնալ առաջ,
Ահա մի թումբ ճամփի կողքին,
Թմբի վրա մի ծոված խաչ:

— Վճր աղքատն ե եստեղ թաղվել
Սարի գլխին վորը ու մենակ.
Ա՛խ, չէր լինի ել նրա նման
Պիտի պառկեմ ցուրտ հողի տակ:

Գնում ե նա դեպի ծուխը,
Ահա մի գլուղ սարի տակը,
Դյուղի ծերին մի տան վրա
Ծածանվում ե դրոշակը:

Եդ տան պատին պլակատ կա՝
Հարբած դեմքով ցարը վրան:
— Բարե ուր ձեզ: — Բարով չեկար:
Յե՛վ ամբոխը պատեց նրան:

— Պապի, գիշերն ետեղ մնա,
Յեղանակը թաց ու թե՛ն ե:
— Ես բ՛նչ գեղ ե: — Պուգաչովկա,
Ես ել ոգնող կոմիտեն ե:

2679 1006 28200

Մեր ճամփորդին առավոտյան
 Լավ հագցրին վոտքից գլուխ. —
 Տվին շապիկ, շալվար, վարտիկ,
 Կոշիկ, տաք քոշեր ու արխալուղ:

— Հագի, պապի, մի ամաչի:
 Մենք շատ լերկար համբերեցինք:
 Ես բոլորը հարուստների
 Մոգովներից դուրս բերեցինք:

Քուրքը հագավ ու հուզմունքից
 Խոր հառաչեց ծերը բարի,
 — Մինչև եստեղ, զավակներս,
 Յես քայլել եմ ութսուն տարի:

1918

ԿԱՆԱՆՑ ԲՈՒՆՏԸ

Թող պատմածս ուրիշներին խրատ դառնա:
 Բոլոր կանայք, դուք ել յեղեք եսպես անաս:

1.

Քսաներեք թվի դեպք ե,
 Ինչ պատմել եմ ես առակում:
 Պատահել ե ձմրան մի որ
 Տկլոր կոչված զավառակում:

Գավառակի Տկլոր գլուղը,
 Վոր պահում եր իր կրոնը,
 Պատրաստվում եր կատարելու
 «Նիկոլ սրբի» ձմռան տոնը:

Ես անգամ ել ամբողջ գլուղը, —
 Ծեսերի մեջ պինդ ու համառ, —
 Պատվիրել եր Խեղրոնիային
 Արաղ քաջել տոնի համար:

Ու Խեղրոնիան՝ գլուղի միջի
 Արաղ քաջող միակ մարդը
 Մեծ ու փոքր տակառներով
 Պատրաստել եր իր մակարդը:

Արդեն տոնի նախորդակն ե,
 Ժամկոչն անվերջ զանգ ե տալիս,
 Իսկ արաղը Խեղրոնիայի
 Տակառներում չեռ ե գալիս:

Ժամը լիքն է: Ել տեղ չկա
Տղամարդկանց արձակ դասում:
Յերեք տերտեր խուպրո ձենով:
Բեմի առաջ չեղզ են տաում:

Սբոց դասը լուռ հայում է
Տղամարդկանց լերկար շարքին:
Տղամարդիկ միտք են անում.
— Եզուց պիտի խմենք կարգին:

2.

Հավաքվել են բոլոր կանայք,
Մեծ ու փոքր, հաստ ու բարակ,
Հորքուր Դարիան ցուրտ հատակին
Ծունր է դնում արագ-արագ:

Նրա կողքին հորքուր Մարիան
Պաղ՝ հայացքով կանգնել է լուռ
Ու անտեղի խաչ է հանում,
Հոգին մռայլ, սիրտը տխուր:

Մյուս կանայք ել տրտում են,
Յերեսներեց թուն է կաթում.
Նրանք գիտեն, թե խելրոնիան
Ինչի՞ վրա չե աշխատում:

Կանանց սիրտը վկայում է՝
Վնաս կգա տոնի օրից:
Մի նոր վատ բան պիտի լինի,
Մարդիկ պիտի հարբեն նորից:

3.

— Եզուց ելի բուրդ ու բմբուլ
Քամուն կտան,—
Հառաչում է
Խեղճ Լուկերիան:

— Քամուն կտան,—
Հառաչում է
Հորքուր Մարիան:

— Քամուն կտան,—
Արտասվում է

Հորքուր Դարիան:

— Քամուն կտան,—
Շշնջում է կանանց շարքը,—
Վաղը նորից կխանգարվի
Դյուզլի կարգը.

Պիտի լակեն,
Հետո դառնան,
Իրար թակեն:
Ես տոնը միշտ
Բերել ե վիշտ:

Բավական չե՞հա տանջանքը
Անխոս տաններ.
Յեկեք, քուլրեր, գլխներիս
Մի ճար անենք:
Ու Լուկերիան միտքը հայտնեց
Խեղճ Մարիային,
Հորքուր Մարիան՝
Ծեր Դարիային,

Հորքուր Դարբան՝

Ֆետինիային,

Ֆետինիան ել՝

Ակսինիային,

Ակսինիան ել՝

Ագրաֆենին,

Ագրաֆենան՝

Մատրենային,

Մատրենան ել,

Ակուլինին.

— Յեկեք, ծածուկ ժողով անենք

Լուկերիայի մարագի մեջ.

Բայց մեր մարդիկ թող չիմանան,

Թե չե կանեն կռիվ ու վեճ:

4.

Հավաքվել են գլուղի կանաչք

Մարագի մեջ, ինչպես ասին:

Մի խելոք կին ճառ և խոսում

Իր հարբեցող մարդու մասին.

— Ամուսինս ամեն իրկուն

Սաստիկ հարբած տուն և գալիս,

Վախենում եմ մի բան ասել—

Վրաս բռունցք և թափ տալիս:

Գլտեմ՝ դուք ել իմ որին եք,

Սգի մեջ եք ամբողջ տարին,

Բայց ուրիշ տեղ կանաչքն արդեն

Հասկացել են չաբն ու բարին:

Անցավ խավար ժամանակը,

Պոկվեց կանանց լեզվի կապը:

Յեկեք, մենք ել մեր չար մարդկանց

Ցուլց տանք մեր ուժն ու սարսափը:

Յեվ վորպեսզի վաղը նորից

Զպատահի մի դժբախտ բան,

Յեկեք հանենք մի վորոշում,

Միահամուռ ու միաբան:

— Ի՞նչ վորոշում:

— Բիչ սպասի.

Թող ամեն կին

Իր միտքն ասի:

5.

Տոնը յեկավ, սկսվել և

Պատարագը:

Յեկեղեցին լիք լցված և

Մինչև բակը:

Բայց դատարկ և ձախակողմը,

Կանաչք չկան:

Գուցե տանը գործ են անում,

Հետո կգան:

Տղամարդիկ աղոթում են

Ստեղծողին,

Սակայն մտքում ճաշակում են

Տոնի ողին:

Տեր Իպատը դնդնում և.

— Աղոթք անենք,

Սիրենք միմյանց և միաբան

Խոստովանենք:

Յերգասացներ. — Հոր, և վորդվո, և սուրբ հոգվո,
Միասնական և համազո
Յերրորդության:

Տեր Իսկասք. — Ի՛մաստու՛թյան...

Յերկար բառ եր, տեր Իսկասք
Դժվարացավ:

Եդ միջոցին մի գլուղացի

Բեմ բարձրացավ:

— Բա չեք ասի, գետը լցրին

Տոնի ողին.

Մեր վրբ կանայք տակառներում

Բան չթողին:

— Ես ի՛նչ բան ե. — Քանի շուտ ե,

Գնանք, փրկենք մնացորդը:

— Ա՛խ, վրբ կանայք, ձեզ խիղճ չկա,

Պետք ե կտրել ձեր կոկորդը:

Շփոթութունն խկույն տիրեց

Յեկեղեցու հոծ ամբոխին:

Իրար անցած դուրս են վազում

Աղատելու թափված ողին:

Աթոռակալ ձեր Անտոնը,

Դախին թողած մոմի փողը,

Խրվեց վազող ամբոխի մեջ

Ջարդոտելով կուշտն ու կողը:

Դյուղխորհրդի նախագահը,

Միանալով վազող մարդկանց,

Կատաղաբար բղավում ե.

— Կբանտարկեմ բոլոր կանանց:

Ու վազում են դեպի գետը

Մարդիկ բոբիկ ու գլխաբաց:

Նրանց՝ ծառան ե հետևում
Սուրբ պատկերը ձեռքին բռնած:
Տերտերները շուրջառներով
Հետևում են հոծ ամբոխին:
Ահա թե ի՛նչ փորձանք լեկավ
Տոնի որը գլուղի գլխին:

6.

Խաղում ելին գետի վրա
Տաք գոլորշու քուլաները,
Ենտեղ, վորտեղ ընկած ելին
Ողու դառարկ քուղաները:

Ես վոր տեսան տղամարդիկ,
Հայհոյեցին քթի տակին:
Հալը Իսկասք շրթունքները
Մոտեցրեց սառցի ծակին:

Խմեց ջուրը, տեսավ՝ վոչինչ
Չի մնացել թափված տեղը:
— Կանայք գործը լավ են տեսել,
Ա՛յ անիծվի դրանց ցեղը:

Յեվ գլուղացիք դեռ շատ լերկար
Աղմկեցին գետի ափին.
— Ա՛խ, թե մի կին կպատահեր
Մեր բարկության ուժեղ թափին:

— Կխեղդեցինք տեղն ու տեղը:
— Նրանց պետք ե մի լավ թակեր:
— Վհնց կլթակես, հավաքվել են
Դպրոցի մեջ, դուռը փակել:

Ե՛, բան չկա, թող պահ մտնեն,
Պատիժները պիտի գտնեն:

7.

Եսպես չերկար գետի ափին
Բարձրացրին աղմուկ ու վեճ,
Վերջը տխուր սկսեցին
Ման գալ իրենց բակերի մեջ:

— Ե՛, եսպես ել տոն կլինի,
Ջանճրալի չե, մաշող թուջն ե:
Կարծես որը ել չի մթնում,
Ուր ել գնաս միևնույն ե:

Մի քիչ հետո հուզված մարդիկ
Կամաց-կամաց հանգստացան,
Յեվ շատերը սկսեցին
Դատել խելոք մարդու նման:

— Ե՛, ի՞նչ հանցանք ունին կանաչք:
— Ճիշտ վոր խոսենք, ես լավ դաս ե:
— Մենք ել գիտենք, վոր հարբելը
Կյանքի համար մեծ վնաս ե:

Կանաչք բարի նպատակով
Գետը լցրին տոնի ողին:
— Նրանց ինչո՞ւ մեղադրենք,
Տեղն ե մեզ պես հարբեցողին:
Հարկավոր ե կանանց գթալ
Յեվ նեղութուն իզուր չտալ:

8.

Յերբ վոր մթնեց, ել չերեխա
Տուն չմնաց,
Ամեն մեկը շտապ-շտապ
Դպրոց գնաց:
— Նանի, հերս կանչում ե քեզ,
Արի, նանի:
Հերս ասաց՝ չվախենա,
Բան չեմ անի:
Կանաչք ուրախ դուրս թափվեցին
Խավար բակից,
Վոգևորված իրենց փայլուն
Հաղթանակից:

*

Թող պատճաճս ուրիշներին խրատ դառնա:
Բոլոր կանաչք, դուք ել չեղեք եսպես անահ:

ՑԱՆԿ

Կոմունարներ	3
Կլարնետը ու սրինգը	5
Բարեսիրտ մարդը	6
Մոմը	7
Տերերի սովերը	8
Յեկեղեցում	10
Բերքը	11
Հաքյավ վորդին Աստուծո	12
Մըջյունների կոմունա	14
Յերգում	16
Մինչև հասել	17
Կանանց բունդը	19



<< Ազգային գրադարան



NL0311471

10.064

ԳԻՆԸ 20 Կ

ԿԱԶՄԸ 15 Կ



ДЕМЬЯН БЕДНЫЙ
Стихотворения и басни
ГИЗ ССР Армении, Ереван